



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ

Գ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Գումարուած Յուլիս 4, 1923

17րդ Փողոցի Եկեղեցւոյն մէջ Նիւ Եօրք

1923

PARKER HILL PRESS, 1117 COLUMBUS AVE., BOSTON

ՀՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Հայ Կարմիր Խաչերու Մասնաճիւղերու տրամադրութեան տակ դնելով Գ. Պատգամաւորական ժողովի այս մանրամասն Ատենագրութիւնը՝ մեր գլխաւոր նպատակն է լոյսի տակ բերել կատարուած ամբողջ իրադարձութիւնները, որպէսզի հեռաւոր անդամները կրնան ամբողջական գաղափար մը կազմել այդ մասին :

Լիայոյս ենք որ Հայ Կարմիր Խաչի անունին եւ անոր սրբազան նպատակներուն շուրջ բոլորուած բոլոր անաջառ անդամները կը տեսնեն բուն իրականութիւնը :

Հարկ կը սեպենք նաեւ ծանուցանելու այս առթիւ թէ Հայ Կարմիր Խաչին հետ ըլլալիք բոլոր պաշտօնական յարաբերութիւնները կատարուելու են հետեւեալ հասցէով .—

ARMENIAN RED CROSS

Central Committee

P. O. Box 77, Mad. Sq. Sta.

New York City

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ

Գ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Գումարուած Յուլիս 4, 1923

17րդ Փողոցի Եկեղեցւոյն մէջ Նիւ Եօրֆ

ՆԻՍՏ Ա.

Ժողովը սկսաւ ժամը ճիշտ 1.30-ին Կ. Ե.:

Պաշտօնաւարտ Կեզր. Վարչութեան Ատենապետուհին՝ Տօքթ. Կիւլէզեան բարի դալուսա մաղթելէ վերջ պատգամաւորներուն, առաջարկեց ընտրել առժամեայ Դիւանը:

Ժողովը կամենալով առժամեայ Դիւանը բաց քուէով ընտրել՝ ձայներու բացարձակ մեծամասնութեամբ ընտրեց Տիկ. Ա. Շալճեան՝ Ատենապետուհի և Թր. Ս. Պօյաճեան՝ Ատենադպրուհի:

Ընտրուեցաւ զանազան յանձնախումբերու ընտրութեանց համար՝ Ընտրական Յանձնախումբ մը, որդէսդի եռադասիկ ցանկեր պատրաստէ և ժողովին բերէ: Մեծամասնութեան քուէով ընտրուեցան Հեռուեալ Հինգ Հոգիները.

Տիկին Անսուրեան, Եղուարդ Սահակեան,
Տիկ. Զարգալաթճեան, Տիկ. Գաղանճեան եւ
Օրիորդ Զպուքճեան:

Ընտրուեցաւ նոյնպէս Պատգամաւորներու իրաւասութիւնը ճշդող Յանձնախումբ մը հետեւեալներէ՝ Տիկ. Մ. Գաղանճեան, Տիկ. Մ. Յովսէփեան եւ Պրն. Փ. Աւագեան:

Երբ Յանձնախումբը իր գործով զբաղեցաւ, այդ միջոցին կարդացուեցաւ պաշտօնաւարտ Կեդրոնական Վարչութեան տեղեկագիրը Տիկ. Քացախեանի կողմէ, իսկ քննադատութիւններն ու կարծիքներու փոխանակութիւնները թողուեցան իրենց կարգին:

Կարդացուեցաւ Շիքախօյի մասնաճիւղէն եկած նամակ մը, որով կը թելադրուէր՝ որ եթէ Տիկին Գոնտահանը չընդունի իրեն տրուած ձայնը՝ Կեդր. Վարչութիւնը իր կողմէն նշանակէ իր յարմար դատած անձը: Հակառակ անոր որ Կեդրոնական Վարչութիւնը նշանակած էր Տիկին Վարդանեանը՝ Ժողովը դիտել տուաւ Կեդրոնական Վարչութեան որ ըստ կանոնագրի՝ պատգամաւորի ձայնը կրնայ տրուիլ բացի Մասնաճիւղի կողմէն՝ Պատգամաւորական Ժողովէն, որով Շիքախօյի պատգամաւորի հարցը յետաձգուեցաւ մինչեւ մնայուն դիւանին ընտրութիւնը:

Կարծիքներ փոխանակուեցան Տիթրօթիթի խընդրին շուրջ, որտեղէն եկած էին Կեդրոնական Վարչութեան կողմէ իրաւասու ճանչցուած երկու պատգամաւորներ եւ երկու բողոքողներ, որոնք կը պընդէին թէ իրենք են բուն օրինաւոր պատգամաւորները:

Տօքթ. Յովսէփեան առաջարկեց որ Տիթրօթի հարցը երկու մասի բաժնուի եւ ժողովը նախ դրադի Կեդրոնական Վարչութեան իրաւասու ճանչցած պատգամաւորներու հարցով, ապա բողոքողներուն որոնցմէ վերջ քուէարկութեամբ ճշդուի անոնցմէ որ մէկուն իրաւասու ըլլայր:

Երկրորդուելէ վերջ այս առաջարկը, դիտողութիւններ եղան թէ Կեդրոնական Վարչութեան ճայն շունեցող անդամ մը իրաւունք չունի առաջարկ բերելու: Տօքթ. Յովսէփեան եղած դիտողութիւնը ընդունելով իր առաջարկը ետ առաւ, սակայն ուրիշ պատգամաւոր մը որդեգրելով նոյն առաջարկը սեղանին յղեց:

Առաջարկուեցաւ եւ ընդունուեցաւ որ Տիթրօթի այն մասնաճիւղը որ Կեդրոնական Վարչութեանէն իրաւասու ճանչցուած է, անոր պատգամաւորները ընդունուին ժողովէն:

Առժամեայ Դիւանին ատենապետուհին՝ Տիկին Եարձեան բանաւոր պատճառով ժողովէն բացակայել ստիպուելուն համար՝ միայն յաջորդ նիստին համար Ատենապետուհի ընտրուեցաւ Տիկին Պուճիգանեան:

ՆԻՍՏ Բ.

Ժողովը բացուեցաւ ժամը 9.30-ին Կ. Ն. Քուէի մեծամասնութեամբ որոշուեցաւ Տիթրօթի բողոքող մասնաճիւղի պատգամաւորները լսել եւ նկատի առնել անոնց հարցը:

Ժողովը փակուեցաւ ժամը 10-ին:

ՆԻՍՏ Գ.

Ժողովը սկսաւ առաւօտեան ժամը 11-ին :

Կարդացուեցաւ նախորդ նիստին արձանագրութիւնը եւ վաւերացուեցաւ :

Երկար վիճարանութիւններ տեղի ունեցան ճշգրելու համար իրաւասու պատգամաւորներու հարցը եւ յետոյ լսելու համար Տիթրօիթի բողոքողները, սակայն Տօքթ. Կիւլէղեան՝ իր այս առաջարկին տեղի տալով՝ առաջարկեց թէ պէտք է ընդ առաջ երթալ մեր նախորդ նիստի որոշումին եւ լսել Տիթրօիթի բողոքողները : Ուստի որոշուեցաւ որ մնայուն Դիւանի անդամներու ընտրութենէն վիժր միայն քուէարկել անոնց հարցը :

Ժողովը լսեց Տիթրօիթի բողոքող պատգամաւորներէն Տիկ. Հայթայեանը, իսկ միւսը՝ Տիկին Եաղուպեան՝ յայտնեց թէ իր նախորդին յայտարարութիւնները բոլորովին ճիշդ էին եւ ինք կը փափաքէր միայն վաւերացնել զանոնք :

Բողոքողները հարցաքննուեցան ներկայ եղող պատգամաւորներու կողմէ եւ եղած բոլոր հարցերուն պատասխան ու լուսարանութիւններ տուին :

ՆԻՍՏ Դ.

Ժողովը սկսաւ ժամը 3:30-ին Կ. Ե. :

Կեդրոնական Վարչութեան իրաւասու ճանչրցած պատգամաւորը լսելէ վերջ՝ պաշտօնաւարտ Կեդր. Վարչութեան Ատենապետուհին՝ Տօք. Կիւլէղեան ժողովին հաւանութեամբ կարդաց կարգ մը փոխանակուած նամակներ եւ Փրօֆ. Մուրատեանի

անդեկադէրը Տիթրոթի ծանօթ խնդրին շուրջ:

Առաջարկուեցաւ եւ երկրորդուեցաւ թէ պէտք է ընտրել մնայուն Դիւան մը, սակայն դիտողութիւն եղաւ թէ նախ պէտք է իրաւասութիւնները ճշգուհի, որպէսզի քուէարկութիւնը օրինաւոր ըլլայ: Այս առաջարկը երկրորդուելէ վերջ քուէարկուեցաւ եւ քուէի մեծամասնութեամբ ընդունուեցաւ:

Որոշուեցաւ անխափր կերպով իրաւասութենէ զրկել բոլոր այն պատգամաւորները, որոնք չէին լրացներ Կանոնագրի տրամադրութիւնները մասնակցելու համար Պատգամաւորական Ժողովին:

Իրաւասութիւնները ճշգրելու պարագային՝ երբ վեր առնուեցաւ Ինտիրն Օրչրթի պարագան՝ վիճարանութեանց ընթացքին Տքթ. Քէպպապճեան ղէպի Դիւանը յարձակելով՝ պաշտօնաւարտ Կեդրոնական Վարչութեան Ատենապետուհի Տօքթ. Կիւլէզեանին խորհուրդ տուաւ բռնագրաւել Դիւանը: Տօքթ. Կիւլէզեանը անմիջապէս բեմը ելաւ եւ դայբութեամբ ու նախաաւելից թոնով մը անպատուեց թէ Դիւանը եւ թէ պատգամաւորները յայտարարելով թէ՝ «Մը դուռնէն որ կուզէք անկէ կրնաք դուրս ելլել, բաւական է, որ երկու օր ձեզի խաղալիք եղանք, եւն. , եւն. :»

Այս ապշեցուցիչ ապօրինութենէն վերջ՝ Տօքթ. Քէպպապճեան ինքնազուլեխ կերպով Դիւանին սպառնաց որ հրաժարի, սակայն Դիւանը տեղի չտուաւ: Ուստի վարէն քանի մը աթոռներ բեմը հանելով՝ հրահանգեց պաշտօնաւարտ Կեդրոնական Վարչութեան Ատենապետուհի Տիկ. Կիւլէզեանը, որ Ժողովին ընթացք տայ ընտրելով առժամեայ նոր Դիւան

մը, առանց նկատի ունենալու եղած ընդհանուր բողոքներն ու ձեռնպահներուն թիւը:

Այս ապօրինութեանց ի տես՝ Պատգամաւորական Ժողովի օրինաւոր Դիւանը եւ անդամներէն մեծ մաս մը Ժողովասրահը թողլով զուրս ելան ուրիշ տեղ մը շարունակելու համար իրենց օրինական Ժողովը:

ՆԻՍՏ Ե.

Յուլիս 6, 1923, 27րդ փողոցի Մայր Եկեղեցւոյ մէջ

Ժողովը սկսաւ Ժամը 11.50-ին: Ներկայ բացակայի ընթերցումէն վերջ՝ խորհրդակցութիւններ ու կարծիքներ փոխանակուեցան: Ապա կարդացուեցաւ Դիւանին եկած հետեւեալ նամակը.

Յարգելի Պատգամաւորուհիներ եւ Պատգամաւորներ Հայ Կարմիր Խաչի,

Հայ Կարմիր Խաչի Գ. Պատգամաւորական Ժողովոյ Չորրորդ նիստին մէջ (գումար ուած յետ միջօրէի, Յուլիս 5, 1923) իր խորին ցաւը յայտնեց հատուածի մը դժբաղդ մեկնումին վրայ եւ իր օրինական ընթացքը ճշդելէ վերջ՝ միաձայն արտայայտութեամբ որոշեց ներկայ երկտողովս խնդրել ձեզմէ որ յանուն Հայ Կարմիր Խաչի եւ յանուն ի սփիւռս տառապող Հայ այրիներու եւ որբերու՝ վերադառնաք ձեր պարտականութեան գլուխը որպէսզի փոխադարձ հա-

մաճայնութեամբ լուծենք ժողովոյս հար-
ցերը հանդարտօրէն, ինչ որ կը վայելէ Հայ
պատւոյն եւ բանականութեան:

Պատարաստակամ ընդունելութեամբ
Սպասելով ձեզ,

Ի դիմաց Հ. Կ. Սաչի Պատգամ. Ժողովոյ
Դիւան

Ատենապետուհի՛ Աղանի Պուճիգանեան

Ատենադպրուհի՛ Նուրիցա Գ. Սեւուկեան

Վերոյիշեալ նամակը կարգացուելէն վերջ այդ
մասին խորհրդակցութիւններ եղան եւ միաճայնու-
թեամբ որոշուեցաւ հետեւեալ նամակը զրկել անոր
ի պատասխան:

Յուլիս 6, 1923

Յարգելի Պատգամաւորուհիներ եւ Պատ-
գամաւորներ,

Ստացած ենք ձեր Յուլիս 6 թուակիր նա-
մակը՝ ստորագրուած «Ի դիմաց Հայ Կար-
միր Սաչի Պատգամ. Ժողովոյ Դիւան»ին
եւ կը փութանք մեր շնորհակալութիւննե-
րը յայտնել անոր տուն տուող ձեր բարի
զգացումներուն համար:

Անշուշտ դիտէք թէ պատգամաւորուհի-
ներ ու պատգամաւորներս ժողովէն հեռա-
ցանք չկրնալ հանդուրժելով Պատգամաւո-
րական Ժողովին մէջ գործուած օրինազան-

ցութեան, նախատինքին եւ պատգամաւորական ժողովին կողմէ ընտրուած Դիւանին բանաւերաւուծին համար:

Սակայն յանուն Կարմիր Սաչի եւ անոր սրբազան նպատակներուն՝ մենք յանձնառու կրլլանք Պատգամաւորական ժողովը շարունակել ձեզի հետ, եթէ ընդունիք հետեւեալ օրինական պայմանները:

Ա. Պատգամաւորական ժողովին կողմէ օրինաւորապէս ընտրուած առժամեայ Դիւանը պիտի շարունակէ իր պաշտօնը, մինչեւ որ ձայներու ընդհանուր ճշդումով տեւական Դիւան մը ընտրուի:

Բ. Ձայներու ճշդումը պէտք է կատարուի ուղղակի Պատգամաւորական ժողովին կողմէն բոլոր պատգամաւորներու համար անխորտիք, որովհետեւ իրաւասութեանց յանձնախումբին կատարած աշխատութիւնները անաջող եղած չեն: Այս ճշդումին համար կը պահանջենք որ Կեդրոնական Վարչութիւնը Պատգամաւորական ժողովի առջեւ դնէ իր հաշուական եւ թղթակցութեանց գիրքերը:

Գ. Տօքթ. Կիւլէղեան եւ Տօքթ. Քէպասյճեան պէտք է Պատգամաւորական ժողովէն ներողութիւն խնդրեն իրենց անպատշաճ եւ անփայլ վարմունքին համար հանդէպ պատգամաւորներու եւ պատգամաւորուհիներու ու մասնաւորապէս անոնցմէ ընտրուած դիւանին:

Յուսով ենք, ընկերուհի եւ ընկեր պատգա-

մաւորներ, պիտի ընդունիք այս տար-
րական ու օրինական պայմանները, որպէս-
պի Պատգամաւորական Ժողովը կարենայ
չարունակել իր լիակատար ու շինարար աշ-
խատանքը:

Հ. Կ. Խաչի Գ. Պատգ. Ժողովի Դիւան
Ատենապետուհի՝ Աննիկ Շայճեան
Ատենադպրուհի՝ Սաթենիկ Պօյաճեան

ՆԻՍՏ Զ.

Շաբաթ, Յուլիս 7, 1923

Ժողովը սկսաւ Ժամը 11-ին Կ. Ա.:

Ներկայ-բացակայի ընթերցումէն վերջ՝ կար-
դացուեցաւ անջատուած պատգամաւորներու կող-
մէն Ժողովին եկած հետեւեալ նամակը, իբր պա-
տասխան մեր նախորդ նամակին:

Յարգելի պատգամաւորուհիներ եւ պատգա-
մաւորներ,

Հ. Կ. Խ. Գ. Պատգ. Ժողովի,

Նիւ Եօրք, Ն. Ե.

Ստացանք ձեր այսօրուան թուակիրը ի
պատասխան առաւօտեան մեր հրաւէրին:
Կը ցաւինք՝ որ չէք ուզած ընդ առաջ եր-
թալ մեր նամակին հաշտարար ոգւոյն, ու
տակաւին կը պնդէք մեծամասնութեան ձայ
նի դէմ անսաստովի ձեր դիրքին վրայ: Ժո-
ղովրդապետական այս երկրին մէջ, ուր՝

քուէի մեծամասնութիւնն է՝ որ կորուչէ ամէն վիճելի հարց, ձեր առաջարկած պայմանները բացարձակապէս կը փակեն մեր առջև բանակցութեան շարունակութեան հնարաւորութիւնը: Հեռեւապէս մեր բանակցութիւնները փակուած համարելով, արդէն նախապէս ճշդուած պատասխանաբուութիւնը կը թողունք անոնց վրայ, որոնք Պատգամաւորական Ժողովի եկած էին Հայ Կարմիր Պաշտ քանդելու կանխամտածուած ծրագրով մը, որուն ապացոյցներն են «Հայրենիք»ի եւ «Ասպարէզ»ի մէջ անցեալ տարեշրջանի ընթացքին հրատարակուած յօդուածները, եւ որոնց ազգանշանն էր «Հայրենիք»ի Մայիս 10, 1923 թւոյն խորհրագրականը, «Հայ Ազգ. Միութեան Եանւէն» խորագրով:

Յարգանք՝

Ի Դիմաց Գ. Պատգ. Ժողովի

Աղաւնի Պուճիգանեան՝ Ատենապետուհի
Նուրիցա Գ. Սեւուկեան՝ Ատենապարուհի

Այս առթիւ Ժողովը զանազան կարծիքներ ու թելադրութիւններ լսելէ վերջ՝ միաձայնութեամբ որոշեց հետեւեալ բողոքագիրը զրկել անոնց յայտնելու թէ իրենք իրաւունք չունէին «Պատգամ. Ժողով»-ի անունով խօսելու, քանի որ ապօրինի միջոցով մը կը շարունակէին իրենց Ժողովը:

Յարգելի Պատգամաւորուհիներ եւ Վաս-
գամաւորներ,

Ստացանք ձեր Յուլիս 6 թուակիր նամա-
կը: Կը ցաւինք որ ձեզի համար փակուած
կը նկատէք այս բանակցութեանց շարունա-
կութեան հնարաւորութիւնը: Բայց անգամ
«մը եւս ապացոյցանելու համար թէ ձեռք
կանգնած կը մնանք հաշտարմաբանական դեա-
նի վրայ եւ ցանկացող ենք իրական ու ար-
դար միութեան մը, պէտք կզգանք ձեր ու-
շադրութեան յանձնելու հետեւեալ կէտերը:

Ա. Մենք ալ գիտենք որ կը դռնուինք «Ժո-
ղովրդապետական երկրի մը մէջ, ուր ա-
մէն վիճելի հարց կը ճշդուի քուէներու մե-
ծամասնութեամբ»: Բայց մեծամասնու-
թեան անուշով կարենալ խօսելու համար
պէտք էր՝ որ ճշդուած ըլլային ձայները օ-
րինանոր ու գոհացուցիչ եղանակով: Իսկ
այդ բանը տեղի չէ ունեցած. հետեւաբար՝
անհիմն է ձեր մեծամասնութեան անուշով
խօսելու կեցուածքը:

Բ. Ձեր նամակին մէջ խնդրոյ առկայ կը
զարձնէք ամերիկահայ մէկ երկու թերթե-
րու մէջ երեւցած գրութիւնները: Ի՞նչ կապ
ունինք մենք՝ Կարմիր Պաշտ՝ անոնց հետ,
մենք այդ չենք գիտեր: Ո՞ր տրամաբանու-
թեամբ ներկայ կադութեան պատճառները
կը փնտռէք այդ յրադրական գրութիւննե-
րու մէջ, երբ անդին փաստն այն է, որ

կարգ մը պատգամաւորներ՝ իրենց գլուխն ունենալով կեդրոնական Վարչութեան անգամներէն ոմանք, յարձակում գործեցին օրինաւոր առժամեայ Դիւանին վրայ եւ բռնի գրաւեցին զայն, որմէ յետոյ օրինաւոր առժամեայ Դիւանը անախորժութեանց եւ անպատեհութեանց դուռ չբանալու համար՝ պարտաւորուեցաւ ձգել այդ ժողովատեղին եւ ուրիշ տեղ մը շարունակել իր նիստերը: Ձեր Դիւանը ընտրուած է պատգամաւորներու մէկ մասէն, ուստի համաձայն կանոնադրային տրամադրութեանց՝ օրինաւոր չէ եւ իրաւունք չունի խօսելու յանուն Հայ Կարմիր Ուսչի Գ. Պատգամաւորական Ժողովին:

Յարգանք՝

Հ. Կ. Ուսչի Գ. Պատգ. Ժողովի Դիւան

Ատենապետուհի՝ Աննիկ Շալճեան
Ստենադպրուհի Սաթենիկ Պոյաճեան

Ծանօթ. — Այս նամակը կարդացուած չէ պատգամաւորներուն, որովհետեւ հոն հասնելէ առաջ ժողովը ցրուած է եղեր:

Ժողովը այս նկատի առաւ Տիթրօթիթի բողոքող պատգամաւորներու հարցը եւ որոշեց իրաւասու ճանչնալ անոնց պատգամաւորները, հաւատալով որ անոնք արդարացի եղած են:

Մեր Դիրքը Յառաջիկային

Որոշուեցաւ որ կատարուած բոլոր բանակցութիւնները մամուլի յանձնուին: Այս առթիւ որոշուեցաւ պաշտօնական յայտարարութիւն մըն ալ հրատարակել, որպէսզի ժողովուրդը լուսարանուի բոլոր իրադարձութեանց մասին: Այս պաշտօնական յայտարարութիւնը պատրաստելու համար ընտրուեցաւ երեք հոգիէ բաղկացեալ յանձնախումբ մը: Ժողովը փակուեցաւ ժամը 12-ին:

ՆԻՍՏ է.

Յուլիս 7, 1923 ժամը 2, 4. Ե.

Ձանազան վիճարանութիւններ եւ տարակարծութիւններ եղան Հայ Կարմիր Սաչի Կեդրոնի մասին: Ապա ժողովը յանդեցաւ այն եզրակացութեան թէ Կեդրոնը պէտք է պահել Նիւ Եօրք: Եռապատիկ ցանկի մը պատրաստութենէն վերջ քուէներու առաւելագոյն մեծամասնութեամբ ընտրուեցան հետեւեալները իբր Կեդրոնական Վարչութիւն յաջորդ տարեշրջանին համար:

Տիկին Արմէնեան

Պրն. Ե. Սահակեան

Տիկին Պողոսեան

Պրն. Թ. Տէյրմէնճեան

Օր. Փ. Չպուղճեան

Պրն. Արմէն Վահէ

Օրիորդ Չատիկեան

Քուէարկոններու ընդհանուր թիւը 2A ըլալով վերոյիշեալները արդէն արժանացած էին մեծամասնութեան քուէին, հետեւաբար ժողովը շնորհաւորեց նորրձախի Կեդրոնական վարութիւնը եւ հրահանգեց պատգամաւորները աւելի սերտ կերպով փարիլ Հայ Կարմիր Սաշի որդեգրած սրբազան նըպատակներուն եւ աւելի մեծ եռանդով լծուիլ յառաջիկայ գործունէութեան:

Ժողովը փակուեցաւ ժամը 7.30-ին:

1920

Հայ Կարմիր Սաշի

Հայ Կարմիր Սաշի
Հայ Կարմիր Սաշի
Հայ Կարմիր Սաշի
Հայ Կարմիր Սաշի
Հայ Կարմիր Սաշի
Հայ Կարմիր Սաշի
Հայ Կարմիր Սաշի
Հայ Կարմիր Սաշի
Հայ Կարմիր Սաշի
Հայ Կարմիր Սաշի

